

---

---

**ՀԱՄՇԵՆԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆԵՐԻ  
ՏԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ**

**Ա. Ս. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ**

789 թ. Համշենում հաստատվեցին Ամատունիների և մի քանի այլ հայ նախարարական տների ներկայացուցիչներ՝ իրենց զորաջոկատների և 12 հազար հայ ազգաբնակչության հետ միասին: Նրանք վերականգնեցին տեղի հայկական իշխանությունը, որը կործանվել էր 628 թ.<sup>1</sup>:

Համշենի պատմության մեջ դրանից հետո սկսվեց մի ժամանակաշրջան, որի լուսաբանմամբ, որքան մեզ է հայտնի, դեռևս ոչ մի հետազոտող չի զբաղվել: Խոսքը IX-XI դարերի մասին է, երբ վերականգնվում է Հայաստանի քաղաքական անկախությունը, հայ Բագրատունիները հզորանում են ու իրենց իշխանությանը ենթարկում շրջակա երկրները՝ Վիրքը, Աղվանքը, Կովկասյան լեռների լեռնականների ազգագավառները և Ծանարների երկիրը՝ Ալանաց դռնով: Հայկական գործը Կղարջքի կողմից դուրս է գալիս Սև ծովի ափը: Հայ Բագրատունիների գերիշխանությունն ընդունում է նաև Ափխազաց թագավորությունը<sup>2</sup>:

Համշենի պատմության այս շրջանի ուսումնասիրությունը բարդանում է սկզբնաղբյուրներում տեղեկությունների բացակայության պատճառով: Այդ իսկ պատճառով սկզբում հարկ ենք համարում անդրադառնալ հայ Բագրատունիների տերության մաս կազմող և Համշենի իշխանության հարևանությամբ գտնվող Տայքի և Կղարջքի Բագրատունիների իշխանությունների խնդրո առարկա շրջանի պատմությանը վերաբերող որոշ կարևոր հարցերի քննությանը, որը մեզ հնարավորություն կտա հստակ պատկերացում կազմելու տարածաշրջանում տիրող վարչաքաղաքական իրավիճակի մասին:

Հայաստանում արարական տիրապետության դեմ 774-775 թթ. տեղի ունեցած ապստամբության պարտությունից հետո ապստամբ Բագրատունիները հեռացան իրենց տիրույթներից ու հաստատվեցին Տայքի հյուսիսային շրջաններում և Մեծ Հայքի Գուգարք աշխարհի Կղարջք գավառում: Նրանց ներկայացուցիչ Ատրներսեն Բագրատունին, որը Մամիկոնյանների կողմից կուրացված Աշոտ Բագրատունու (Հայոց իշխան՝ 732-748 թթ.) որդի Վասակի որդին էր<sup>3</sup>, ի թիվս այլ շրջանների

---

<sup>1</sup> Տե՛ս «Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 166-169: Հմմտ. **Յովհան Մամիկոնեան**, Պատմութիւն Տարաւոյ, «Մատենագիրք Հայոց», Է դար, Անթիլիաս, 2005, էջ 1122-1123: Տե՛ս նաև **Լ. Խաչիկյան**, Էջեր համշենահայ պատմությունից, ԲԵՀ, 1969, թիվ 2, էջ 115-118, **Ա. Եղիազարյան**, Համշեն-Համշենի պատմության մի կարևոր հարցի շուրջ, «Ձայն համշենական», թիվ 1-2, հունվար-փետրվար, էջ 1-2, **Նույնի՝** *Об истории основания Амамашена-Амшена, "Амшен-Понто́с", вып. I, Краснодар, 2009, էջ 37-40:*

<sup>2</sup> Տե՛ս «Յովհաննեսի կաթողիկոսի Դրասխանակերտեցոյ Պատմութիւն Հայոց» (այսուհետև՝ **Հովհաննես Դրասխանակերտցի**), Եր., 1987, էջ 142, 164, «Հավաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի» (այսուհետև՝ «Հավաքումն պատմութեան»), Վենետիկ, 1862, էջ 91, «Պատմութիւն Շապիոյ Բագրատունոյ» (այսուհետև՝ **Շապուի Բագրատունի**), Վաղարշապատ, 1921, էջ 65-66:

<sup>3</sup> Տե՛ս «Հավաքումն պատմութեան», 1862, էջ 87-88:

տիրում էր Տայքի Արսեաց փոր և Կող գավառներին<sup>4</sup>: Արսեաց փոր գավառը, ըստ Մովսես Խորենացու «Աշխարհացոյց»-ի, տարածվում էր «առ Պարխար լեռամբն»<sup>5</sup>, այսինքն՝ Համշենի իշխանության սահմանակցությամբ: 775 թ., երբ ճնշվեց հայոց հուժկու ապստամբությունը, ի թիվս Հայաստանի այլ շրջանների, Տայքին ևս տիրող Մամիկոնյանները ծանր հարված ստացան և դրանից հետո այլևս ուշքի չեկան: Երբ Վասակ Բագրատունին իր որդի Ատրներսեհի հետ 775 թ. գաղթեց Տայքի և Կղարջքի կողմերը, Հայաստանի Բագրատունիները Տայքին դեռևս չէին տիրում: Վասակի և Ատրներսեհի՝ Տայքի հյուսիսային անմատչելի շրջաններում (ինչպես օրինակ՝ Պարխարյան լեռների շրջանում գտնվող Տայքի Արսեաց փոր գավառում) և Կղարջքում հաստատվելը այդ առումով հնարավոր է: Բայց երբ Հայոց իշխան Աշոտ Մսակեր Բագրատունին ժառանգական իրավունքով տիրեց Տայքին (քանի որ նրա մայրը Մամիկոնյան էր, իսկ ապստամբությունից առաջ Տայքը Մամիկոնյանների տիրույթ էր<sup>6</sup>), Վասակը և Ատրներսեհը քաշվեցին Կղարջք: Վարդան վարդապետը հաղորդում է, որ Աշոտ Մսակերը և նրա եղբայր Շապուհը IX դ. սկզբին «գրաւեցին յինքեանս զՇիրակ և զԱշոցք, և զգաւառն Տայոց»<sup>7</sup>: Այդ պատճառով ո՛չ Աշոտ Կյուրոպաղատը և ո՛չ էլ նրա որդիները Տայքի որևէ հատվածի չէին տիրում, որն էլ հաստատում են սկզբնաղբյուրները<sup>8</sup>:

Ատրներսեհ Բագրատունու որդին Աշոտ կյուրոպաղատն էր (մահ. 826 թ.), որ Բյուզանդիայի կայսրից ստացել էր կյուրոպաղատի կոչում: Գրանից հետո նա տիրել էր «ի Կարջաց մինչև ի Տփլիս, լեռնակողմամբն յանդերձ»<sup>9</sup>: Այդ տարածքը համապատասխանում էր արևմտյան Գուգարքին: IX դ. սկզբին Արաբական խալիֆայության Արմինիա վարչական շրջանում (նստիկանություն), որն ընդգրկում էր Հայաստանը և այսրկովկասյան երկրները<sup>10</sup>, իրավիճակը կտրուկ փոխվեց:

Հայաստանի մեծ մասին տիրած Բագրատունիները, որոնք վայելում էին Խալիֆայության հովանավորությունը, ստացան Արմինիայի իշխանաց իշխանի պաշտոնը (Բագարատ Բագրատունի (826-851)), իսկ 862 թ. Աշոտ Բագրատունին՝ ապագա Հայոց թագավորը, ստացավ Արմինիայի ամիրայի (նստիկան) լիազորությունները<sup>11</sup>: Սկզբնաղբյուրների տեղեկություններից երևում է, որ Տայքում և Կղարջքում

<sup>4</sup> Տե՛ս «Матиане Картлиса», пер. М. Лордкипанидзе, Тб., 1965, էջ 28:

<sup>5</sup> «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ յավելուածոք նախնեաց», հրատ. Ա. Սուրբեան, Վենետիկ, 1878, էջ 32:

<sup>6</sup> Տե՛ս «Հավաքումն պատմութեան», էջ 83, «Ստեփանոսի Տարօնցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական» (այսուհետև՝ **Ասողիկ**), հրատ. Ստ. Մախասեանց, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 106:

<sup>7</sup> «Հավաքումն պատմութեան», էջ 83:

<sup>8</sup> Տե՛ս «Матиане картлиса», էջ 31, **Вахушти Багратиони**, История царства Грузинского, перевод Н. Накашидзе, Тб., 1976, էջ 187, «Жизнь и известия о Багратидах, царях наших грузинских, откуда они явились в эту страну, или с какого времени владеют они царством Грузинским, которое написал Сумбат, сын Давида» (տե՛ս «Сборник материалов для описания местностей и племен Кавказа», вып. XXVIII, Тифлис, 1900, էջ 141): IX-X դդ. Տայքի իշխանության պատմության և պատմական աշխարհագրության խնդիրների մասին մանրամասնորեն տե՛ս **Ա. Եղիազարյան**, Տայքի իշխանությունը հայ Բագրատունիների տերության համակարգում, ՊԲՀ, 2008, թիվ 3, էջ 197-208:

<sup>9</sup> «Հավաքումն պատմութեան», էջ 84:

<sup>10</sup> Տե՛ս **Ա. Եղիազարյան**, Արմինիա նստիկանությունը (պատմա-աշխարհագրական ուսումնասիրություն), պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2006, էջ 10-13, **նույնի՝** Արմինիա նստիկանության սահմանները, «Պատմա-քանասիրական հանդես», 2005, թիվ 1, էջ 243-258:

<sup>11</sup> Տե՛ս **Հովհաննես Գրախանակերտցի**, էջ 162-166, **Ասողիկ**, էջ 90-101:

արդեն Հայոց Սմբատ Ա Տիեզերակալ Բագրատունու օրոք (890-914) իշխում էին Բագրատունյաց երկու տարբեր ճյուղեր: Սմբատ Ա-ի արխիստանական արշավանքի ժամանակ (X դ. սկիզբ) նրա գործերի կազմում էին Տայքի գորամասը՝ Գոռամ իշխանի և Կղարջքի գորամասը՝ Կղարջքի («վրաց» կոչված)<sup>12</sup> թագավոր Ատրներսեհի գլխավորությամբ<sup>13</sup>:

Գեռնա Ն. Մառը, Ն. Տոկարսկին, Տ. Մարությանը և այլք մանրամասնորեն անդրադարձել են վրացական պատմաբանների՝ Տայքի պատմության կեղծարարությանը, որոնց կողմից փորձ է արվում ցույց տալ, թե խնդրո առարկա ժամանակաշրջանում գոյություն է ունեցել այսպես կոչված «Տաօ-Կղարջքի» (իմա՝ Տայք-Կղարջքի-Ա.Ե.) միասնական իշխանություն<sup>14</sup>: Նշված հետազոտողները վեր են հանել վրաց պատմագրության կողմից անընդհատ ներմուծվող այդ տեսության կեղծ լինելու փաստը, ինչը երբեմն նշում են նաև վրացական պատմաբանները<sup>15</sup>:

Տայքի և Կղարջքի առանձին իշխանությունների գոյությունը լավագույնս արտացոլված է Շապուհ Բագրատունու «Պատմություն» աշխատության մեջ: Պատմիչը հաղորդում է, որ Սմբատ Ա-ն «տիրեաց ամենայն աշխարհին Հայոց և ընդ ձեռամբ էած գՀայք և գՏայք, գՎիրք և գԱղվանք»<sup>16</sup>: Այս վկայության մեջ «ամենայն աշխարհին Հայոց»-ը վերաբերում է **հայ** Բագրատունիների տերությունը, որի մեջ մտնում էին թե՛ «Հայք»-ը, թե՛ «Տայք»-ը, թե՛ «Վիրք»-ը և թե՛ «Աղվանք»-ը: «Վիրք»-ը ներկայացվում է երկու ընկալումով՝ որպես Կղարջքում հաստատված Բագրատունիների իշխանություն և որպես բուն Վիրք, իսկ «Տայք»-ը՝ Տայքի իշխանությունը: Այնուհետև Շապուհ Բագրատունին տեղեկացնում է, որ Մոսուլի ամիրայի արշավանքի ժամանակ Սմբատ Ա-ն «էհան հրամանս ընդ ամենայն աշխարհն Հայոց և Վրաց և Աղուվանից և Տայոց»<sup>17</sup>: Վերը բերված հաղորդումները ցույց են տալիս, որ IX դ. վերջին և X դ. սկզբին Համշենի իշխանության մոտակայքում գոյություն ունեին երկու ուժեղ իշխանություն՝ Տայքի և Կղարջքի: Ըստ որում՝ այդ իշխանությունների դեմ ոսնձգություններ է կատարում հզորացած Արխիստանական

<sup>12</sup> Գեռնա Ն. Աղոնցը ցույց է տվել, որ Սմբատ Ա-ից թագ ստացած Ատրներսեհը միայն Կղարջքի տերն էր, թեև աղբյուրներում կոչվում է «վրաց» թագավոր (տե՛ս **Ն. Աղոնց**, Պատմական ուսումնասիրություններ, Բարիս, 1948, էջ 122):

<sup>13</sup> Տե՛ս **Շապուհ Բագրատունի**, էջ 83, **Հովհաննես Գրասխանակերտցի**, էջ 202-204: Հարկ է նշել, որ Կղարջքի Ատրներսեհ Բագրատունի կյուրոպաղատը Սմբատ Ա-ի կողմից թագ էր ստացել և հռչակվել «Վրաց» թագավոր՝ հետագայում անընդհատ ձգտելով անկախանալ (տե՛ս **Հովհաննես Գրասխանակերտցի**, էջ 188, 204-206), մինչդեռ Տայքի Բագրատունիները՝ ունենալով կյուրոպաղատի կոչում, շարունակեցին մնալ հայ Բագրատունիների թագավորության կազմում ընդհուպ մինչև 1001 թ. (երբ այդ իշխանությանը տիրեց Բյուզանդիան)՝ պահպանելով զուտ հայկական դիմագիծ:

<sup>14</sup> Տե՛ս **Н. Марр**, Аркаун, монгольское название христиан, в связи с вопросом об армянах халкедонитах,-в сб. "Византийский современник", т. XII, СПб., 1906, вып. 1-4, էջ 17-22, **նույնի՝** "Георгий Марчул. Житие св. Григория Хандзтийского", груз. текст, введение, издание, перевод Н. Марра, СПб., 1911, էջ XVI, **Н. Токарский**, Архитектура древней Армении, Ер., 1946, **Տ. Մարության**, Հայ ճարտարապետության հուշարձաններ, Եր., 1978: Տե՛ս նաև **Հ. Ասմարյան**, Տայքի պատմության ուսումնասիրությունը նոր պատմագրության մեջ, «Լրաբեր (հաս. գիտ.)», 1975, թիվ 3:

<sup>15</sup> Տե՛ս **Е. Такайшвили**, Археологическая экспедиция 1917-го года в южные провинции Грузии, Тб., 1952, էջ 31, **В. Беридзе**, Архитектура Тао-Кларджети: Место памятников Тао-Кларджети в истории грузинской архитектуры, Тб., 1981, էջ 17:

<sup>16</sup> **Շապուհ Բագրատունի**, էջ 65:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 73:

թագավորությունը, սակայն ջախջախիչ հարված է ստանում Սմբատ Ա-ի կողմից<sup>18</sup>:

Այն իրողությունը, որ հայկական զորքը Սմբատ Ա-ի օրոք Կղարջքի կողմից դուրս էր եկել Սև ծովի ափը<sup>19</sup>, թերևս ճորտի գետի ստորին հոսանքի շրջանում, ցույց է տալիս, որ Կղարջքի կյուրոպաղատությունը չէր սահմանակցում Համշենի իշխանությանը<sup>20</sup>:

Քննությունը ցույց տվեց, որ Համշենի իշխանությանը սահմանակցում էր Տայքի իշխանությունը, ամենայն հավանականությամբ, Արսեաց փոքր գավառի կողմից (Պարխարյան լեռներով): Տայքի կյուրոպաղատությունը Դավիթ կյուրոպաղատի օրոք (961-1001) հասել էր իր հզորության գագաթնակետին ու տիրել շրջակա երկրամասերին<sup>21</sup>:

Ահա վերոհիշյալ վարչաքաղաքական իրավիճակի լույսի ներքո էլ պետք է անդրադառնալ Համշենի իշխանությանը և խնդրո առարկա ժամանակաշրջանի Համշենի պատմության վերաբերյալ միակ հաղորդման լուսաբանմանը: Համշենահայերի շրջանում պահպանվել է մի պատմություն Գրիգոր և Մարտիրոս իշխանների մասին, որոնցից մեկը սերում էր թագավորական տոհմից: Մարտիրոսը Գրիգորի դստերը կնության է խնդրում իր որդի Արտաշենի (թերևս Արտաշես-Ա.Ե.) համար: Գրիգորը չի համաձայնում, և Մարտիրոսը զորքով հարձակվում է նրա վրա, հաղթում նրան, գերում նրա դստերն ու ամուսնացնում իր որդու հետ: Արտաշենը Գրիգորի երկրում՝ Համշենի մեծ գետի ակունքների շրջանում, մի մեծ քաղաք է կառուցում, որը մինչև օրս էլ նրա անունով կոչվում է Արտաշեն<sup>22</sup>: Լ. Խաչիկյանը, անդրադառնալով այս պատմությանը, հանգել է այն ճիշտ եզրակացությանը, որ Համշենի իշխանությունը գտնվել է Սպերի և Տայքի Բագրատունիների քաղաքական ազդեցության ոլորտում: Ըստ նրա՝ պատմաաշխարհագրական այդ միջավայրում թագավորական ցեղ էին համարվում հենց Բագրատունիները, որոնք զենքի ուժով, խնամիական կապեր հաստատելով և այլ ճանապարհներով տիրում էին շրջակա երկրամասերին նամանավանդ Դավիթ կյուրոպաղատի օրոք<sup>23</sup>: Պետք է ավելացնել, որ Բագրատունիները «թագավորական ցեղ» են դարձել IX դ. վերջին, ուստի հիշյալ իրադարձությունները պետք է տեղի ունեցած լինեին դրանից հետո: Հանգելով ճիշտ եզրակացության՝ ցավոք, ուսումնասիրողը չի շարունակում իր հետազոտությունը, որը կարող էր նրան հասցնել անչափ կարևոր հետևությունների: Վերոհիշյալ պատմությունը ցույց է տալիս, որ Համշենի իշխանը Գրիգորն էր, քանի որ պարզ նշվում է, որ Արտաշենը նրա հողում է քաղաք կառուցել: Այստեղից պետք է բխեցնել, որ Գրիգորը, լինելով Համշենի իշխան, թագավորական տոհմից սերել չէր կարող: Ուստի թագավորական տոհմից, այսինքն՝ Բագրատունիներից, սերում էր Մարտիրոսը, որ, փաստորեն, Համշենի իշխանը չէր:

Ահա այստեղ, մեր կարծիքով, թաքնված է անչափ կարևոր մի իրողություն: Ամենայն հավանականությամբ, Համշենի իշխանությանը տիրած Մարտիրոսը Տայքի իշխան-կյուրոպաղատներից մեկն էր: Հայտնի է, որ ինչպես Կղարջքի, այն-

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 81-82, **Հովհաննես Գրասխանակերտցի**, էջ 202-204, “*Матиане Картлиса*”, էջ 32:

<sup>19</sup> Տե՛ս **Հովհաննես Գրասխանակերտցի**, էջ 164:

<sup>20</sup> Մանրամասնորեն տե՛ս **Ա. Եղիազարյան**, Տայքի իշխանությունը հայ Բագրատունիների տերության համակարգում, ՊԲՀ, 2008, թիվ 3, էջ 197-208:

<sup>21</sup> Տե՛ս **Լ. Խաչիկյան**, նշվ. աշխ., էջ 122:

<sup>22</sup> Տե՛ս **Ս. Հայկունի**, Համշեն, «Արարատ», 1895, էջ 295-297:

<sup>23</sup> Տե՛ս **Լ. Խաչիկյան**, նշվ. աշխ., էջ 122:

պես էլ Տայքի կյուրուպաղատները կրում էին մագիստրոսի կոչում<sup>24</sup>: Համշենահայերի շրջանում պահպանված պատմության սկզբնական տարբերակում, մեր համոզմամբ, «Մարտիրոս»-ի փոխարեն եղել է Տայքի իշխանի «մագիստրոս» կոչում-անվանաձևը: Անցել են դարեր, փոխվել է իրավիճակը, և համշենահայերի մեջ «մագիստրոս» անվանումը սկսել է թյուրըմբռնում առաջացնել: Իսկ քանի որ այդ անունը մնան է հայերի շրջանում տարածում ունեցող Մարտիրոս անվանը, աստիճանաբար այն սկսել է ընկալվել որպես Մարտիրոս, սակայն մնացել է այն իրողությունը, որ նա սերում էր թագավորական տոհմից, այսինքն՝ Բագրատունի էր:

Դա չէր կարող լինել Դավիթ կյուրուպաղատը, որն անգավակ էր<sup>25</sup>, քանի որ համշենահայերի մեջ պահպանված պատմության մեջ նշված է, որ Մարտիրոս-«մագիստրոս»-ը Արտաշեն անունով որդի ուներ: Ըստ որում, վերջին տեսակետը ևս չի կարող վերջնական համարվել, քանի որ զարգացած ավատատիրության շրջանում «որդի» կարող էր կոչվել ոչ միայն հարազատ որդին, այլև հոգեզավակը, վասալը կամ կրտսեր դաշնակիցը: Հովհաննես Դրասխանակերտցին, օրինակ, վկայում է, որ հայ Բագրատունի թագավորներին «որդի» էր անվանում Բյուզանդիայի կայսրը<sup>26</sup>: Բացի այդ, ավանդության մեջ «որդի»-ն կարող էր ներմուծվել հետագա ժամանակաշրջանում: Այսինքն՝ դարերի ընթացքում փոփոխությունների ենթարկված և բերանացի մեզ հասած ավանդությունը կարող էր խաթարվել նաև այդ կետում:

Այսպիսով, ամենայն հավանականությամբ, Տայքի իշխանները՝ մագիստրոսները, տիրացել են Համշենի իշխանությանը: Նրանց ներկայացուցիչը սկզբում փորձել է այդ անել խնամիական կապ հաստատելով տեղի իշխան Գրիգորի հետ, բայց քանի որ նա չի համաձայնել, իրականացրել է զենքի ուժով: Սրանից կարելի է բխեցնել, որ Արտաշեն Բագրատունուց՝ Համշենի նոր իշխանից հետո Համշենի իշխանները եղել են Բագրատունյաց տոհմից<sup>27</sup>:

Հայ Բագրատունիների տերության ժամանակաշրջանում Տայքի կյուրուպաղատությունը միայն երկու դեպքում կարող էր տիրանալ Համշենի իշխանությանը: Այդ կարող էր պատահած լինել Աշոտ Ա և Սմբատ Ա թագավորների օրոք կամ էլ Տայքի Դավիթ կյուրուպաղատի օրոք: Վերջին պարագան մենք, այնուամենայնիվ, հակված ենք բացառելու Դավթի անգավակության պատճառով, բացի այդ՝ Դավիթ կյուրուպաղատի օրոք Բյուզանդիան կրկին հզորացել էր ու հասել Տայքի սահմաններին, ուստի, ամենայն հավանականությամբ, այստեղ խոսքը Սմբատ Ա-ի օրոք Համշենը գրավելու մասին է<sup>28</sup>: Ինչպես տեսանք, Սմբատ Ա-ի օրոք հայկական զորքերը դուրս էին եկել Սև ծովի ափերը և հասել Համշենի իշխանության սահմաններին, որով էլ Համշենը տիրելու հնարավորություն էր ստեղծվել Տայքի իշխանների համար: Բացի այդ, դատելով արաբ հեղինակների հաղորդած տեղեկություններից, հենց այդ շրջանում հայկական զորքերը, Կղարջքի կողմից դուրս գալով Սև ծովի ափը, այնուհետև ծովափով շարժվել են դեպի արևմուտք և տիրել Ռիզոն և Տրապիզոն քաղաքներին: Ըստ ալ-Իսթախրիի՝ «նրանք (իմա՝ հայերը-Ա.Ե.) Ռումի երկիրը (իմա՝ Բյուզանդական կայսրություն - Ա.Ե.) մտնելու համար ունեն մի նավահանգիստ, որ հայտնի է Տարաբազունդահ (իմա՝ Տրապիզոն - Ա.Ե.) անունով, որտեղ

<sup>24</sup> Տե՛ս **В. Минорский**, История Ширвана и Дербента IX-XI вв., М., 1963, էջ 135, ծանոթ. 5, **М. Лордкипанидзе**, Возникновение новых феодальных государств, “Очерки истории Грузии”, т. II, Тб., 1988, էջ 315, 327:

<sup>25</sup> Տե՛ս “Матиане Картлиса”, էջ 37-39:

<sup>26</sup> Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 142, 162:

<sup>27</sup> Տե՛ս **Բ. Հարությունյան**, Համշենահայոց պատմությունից, «Եզերք», թիվ 2, Եր., 2006, էջ 34:

<sup>28</sup> Տե՛ս **Շապուհ Բագրատունի**, էջ 81-83:

հավաքվում են վաճառականները և [այնտեղից] մուտք գործում Ռումի երկիրը»<sup>29</sup>: Իբն Հաուկալը Տրապիզոնը համարում է Հայոց թագավորության մեջ մտնող դուռ կամ մուտք դեպի Բյուզանդիա<sup>30</sup>:

Հովհաննես Դրասխանակերտցին, նկարագրելով Սմբատ Ա-ի նվաճումները, այդ թվում՝ նաև Կղարջքի կողմից Սև ծովի ափ դուրս գալը, պատմում է, որ դրանից անմիջապես հետո տեղի ունեցավ Դ-վինի 893 թ. մեծ երկրաշարժը<sup>31</sup>: Եթե ճիշտ է մեր վերոհիշյալ տեսակետը, ապա Տրապիզոնի գրավումը, թերևս, տեղի է ունեցել 892 կամ 893թ.: Համշենի գրավումն էլ պետք է տեղի ունեցած լինի միևնույն թվականին:

Հայտնի է, որ 1001 թ. Տայքի կյուրուպաղատությունն անցնում է Բյուզանդիայի տիրապետության տակ, որը նախքան այդ տիրել էր նաև Տարոնի իշխանությանը<sup>32</sup>: Համշենի իշխանությունը, հավանաբար, միևնույն ժամանակ Տայքի կյուրուպաղատության հետ միասին միացվել էր Բյուզանդիային:

Ի մի բերելով վերը կատարված քննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո, երբ հայ Բագրատունիների տերության կազմի մեջ էին մտնում Հայաստանի մեծ մասն ու այսրկովկասյան երկրները, Համշենի իշխանությունը հայտնվել էր Տայքի իշխանների հետաքրքրությունների շրջանակում: Վերջիններիս համար Համշենին տիրելու հարմար առիթ ներկայացավ 892 կամ 893 թ., երբ Սմբատ Ա-ի գորքը Կղարջքի կողմից դուրս եկավ Սև ծովի ափը և, շարժվելով արևմուտք, տիրեց Ռիզոն և Տրապիզոն քաղաքներին: Տայքի իշխանները, որոնք կրում էին մագիստրոսի կոչում, գրավեցին Համշենը, որից հետո հայկական այդ իշխանությունը մաս էր կազմում հայ Բագրատունիների տերության:

**А. С. ЕГИАЗАРЯН — Амшенское княжество в эпоху державы армянских Багратидов.** — Исследование истории Амшенского княжества в эпоху державы Армянских Багратидов представляет особую сложность в связи с отсутствием прямых свидетельств в источниках. Сохранилось лишь устное свидетельство о том, как Амшен был захвачен Багратидами.

В 892/893 г. армянские войска подчинили все Закавказье и вышли на берег Черного моря со стороны Кларджика. Они двинулись по берегам моря на запад и подчинили города Ризон (Ризе) и Трапизон (Трабзон). В это же самое время князь Тайка захватил Амшенское княжество, после чего там правили Багратиды.

<sup>29</sup> *Al-Istakhri*, Kitáb masâlik al-mamâlik, - Bibliotheca geographorum arabicorum, editio III, p. I, Lugd. Bat., 1967, p. 188.

<sup>30</sup> Տե՛ս **Abū ‘L-Kāsim Ibn Haukal al-Nasībī**, Kitáb surât al-ard, - BGA, editio III, p. II, Lugd. Bat., 1967, էջ 344:

<sup>31</sup> Տե՛ս **Հովհաննես Դրասխանակերտցի**, էջ 162-166:

<sup>32</sup> Տե՛ս **Ասողիկ**, էջ 168: